ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1449 26.08.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Խնդրում ենք Դիտորդական խմբին հայտնել թե սույն թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 28-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի ՁՊՎ ընդունված անձանցից քանիսի մոտ է հայտնաբերվել մարմնական վնասվածքներ, քանիսի վերաբերյալ է իրազեկումներ տրվել վարույթն իրականացնող մարմնին և քանիսի վերաբերյալ է հարուցվել քրեական գործեր:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՆ № 3402
27 08 2014 թ.

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՆ № 6799
«27» 08 2014 թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2210 << 10 >> 09 2014թ.

Ձեր 26.08.2014թ. թիվ 2621/1449 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ծերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ 2014թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 28-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՁՊՎ ընդունված անձանցից 12-ի մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածներ, որոնց վերաբերյալ վարույթն իրականացնող մարմիններին ուղարկվել են իրազեկումներ:

Նշված 12 իրազեկումներից 7-ով քրեական գործ հարուցելը մերժվել է ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով, 1-ով քրեական գործ հարուցելը մերժվել է ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ դիմողի բողոքի բացակայության հիմքով, 2 դեպքով ընթացքը լուծվել է քրեական գործի շրջանակներում, իսկ 2-ով՝ նյութերի նախապատրաստումը շարունակվում է:

ՀՀ ոստիկանության շտաբ